

ՀՀ փաստաբանների պալատը «Իրավունքը զարգացման գրավական» կարգախոսով այսօր՝ ապրիլի 23-ին, փաստաբանական գրասենյակների ցուցահանդես է կազմակերպել: ARMLEGAL EXPO ցուցահանդեսին մասնակցել են ավելի քան երեք տասնյակ մեծ ու փոքր փաստաբանական գրասենյակներ, Արցախի Հանրապետության փաստաբանների պալատը և հանրային իրավական ծառայություններ մատուցող կառույցներ (\$ինանսական համակարգի հաշտարարը, Հայաստանի Հանրապետության նոտարների պալատը, Իրավունքի պաշտպան միավորումը, Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը, Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա, Հայաստանի արտոնագրված թարգմանիչների միությունը և այլն):


Ցուցահանդեսին մասնակցել են ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը, Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ Արթուր Դավթյանը, Տարոն Սիմոնյանը և այլք:

Միջոցառումը ավանդական դարձնելու Պալատի տեսլականը ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշելով, որ. **«Այս քայլով Փաստաբանների պալատը նպատակ է դնում Հայաստանում զարգացնել Փաստաբանական գրասենյակների ստեղծման մշակույթը, փաստաբանության մեջ զարգացնել թիմային աշխատանքը, թիմ, որտեղ կարող են լինել տարբեր կարծիքներ, քանի որ լավագույն արդյունավետ լուծումը միայն թիմային աշխատանքով կարելի է գտնել: ARMLEGAL EXPO ցուցահանդեսի նպատակներից հաջորդն իրավունքի գերակայության հանրահռչակումն է: Արձանագրեմ նաև, որ փաստաբանի մասնագիտությունն այն տեսակն է, որը ամենաշատն է պայքարում իրավունքի գերակայությանը հասնելու համար»:**

Արա Զոհրաբյանն առաջ է քաշել Հայաստանն իրավունքի զարգացած կենտրոններից մեկը դարձնելու գաղափարը և որպես դրան ուղղված առաջին քայլ՝ մատնանշել ARMLEGAL EXPO-ի կազմակերպումը:


ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ողջունելով փաստաբանական գրասենյակների ցուցահանդեսը հայտնել է, -«նման միջոցառումները լայն հնարավորություն են ընձեռում առանձին փաստաբանական գրասենյակների ձևավորած լավագույն ավանդույթներին ծանոթանալու և դրանք տարածելու համար: Մեր երկրի ժողովրդավարության արժեքների կայացման և զարգացման գործում շատ կարևոր է փաստաբանների դերը»:

Փաստաբանական գրասենյակների ցուցահանդեսին կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ տարբեր իրավական թեմաներով, լուսանկարչական ցուցահանդես-մրցույթ, որի հաղթողները պարգևատրվել են դրամական մրցանակներով, ինչպես ՀՀ փաստաբանների պալատի, այնպես էլ փաստաբանական գրասենյակների անունից:









```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```